# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Փետրվարի 4-ին, կիրակի.- Դ կիր. զկնի Ծննդեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գա առ Իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի» (Հովհ. Զ 35) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 73):

**Փետրվարի 11-ին, կիրակի.- Ե կիր. զկնի Ծննդեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Փետրվարի 13-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղեւոնդեանց քահանայից:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Որ նորին դաւանութեամբն խաչակից Քեզ ընտրեցեր զդասս քահանայիցն, Շնորհաբաշխ օծութեամբ կարգեալ հովիւս եւ վարդապետս, Գովեմք զՔեզ ընդ զօրս անմարմնականացն Որդիդ Միածին» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 75):

**Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.- ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի Տաճարն:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 79):

**Փետրվարի 15-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վարդապետ Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Իմ հայրենեաց հոգի՛ Վարդան, Հոգիս հոգւոյդ լինի դուրբան» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 83):

**Փետրվարի 18-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը «Յորում ցնծայր զուարճանայր անտխրական խնդութեամբ» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 86):

**Փետրվարի 25-ին, կիրակի.- Բ կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն աբեղա Գույյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը «Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա՛ ջնջելու, այլ՝ լրաց-

նելու» (Մատթ. Ե 17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 89):

**Մարտի 4-ին, կիրակի.- Գ կիր. Քառասնորդական Պահոց (Անառակին):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 93):

**Մարտի 11-ին, կիրակի.- Դ կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը «Եւ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 95):

**Մարտի 18-ին, կիրակի.- Ե կիր. Քառասնորդական Պահոց (Դատաւորին):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եփրեմ աբեղա Սարգիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Մարտի 24-ին, շաբաթ.- ԼԴ օր Մեծի Պահոց: Տօն է Սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի Վիրապն:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Մարտի 25-ին, կիրակի.- Զ կիր. Քառասնորդական Պահոց (Գալստեան):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Մարտի 31-ին, շաբաթ.- ԽԱ օր Մեծի Պահոց: Յիշատակ Յարութեան Ղազարու:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն աբեղա Գույլյանը: «Հայր մեր»-ից առաջ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց: